



## ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՅԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Գործարար շահերի պաշտպանության ցանցը (ԳՇՊՑ) իր առաքելությանը և շահերի պաշտպանության ոլորտում ունեցած նպատակներին համահունչ, Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության համար բարենպաստ պայմանների ձևավորմանը և զարգացմանը ուղղված խնդիրներից ելնելով իր գործունեությունը իրականացնում է համաձայն սույն Ռազմավարության:

**ԳՇՊՑ-ն միշտ իր ռազմավարական օրակարգում կպահի ՓՄՁ շահերի պաշտպանության անհրաժեշտության խնդիրը և, շեշտելով տնտեսական քաղաքականության ձևավորման գործընթացում ՓՄՁ հանրության մասնակցության կարևորությունը, կխթանի այն, որպես Ցանցի ռազմավարության ծանրակշիռ և կարևոր մաս:**

**ԳՇՊՑ-ն կշարունակի աջակցել ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված պետական քաղաքականությանը՝ հանրային և մասնավոր հատվածների երկխոսության խթանման միջոցով, որը կծառայի ինչպես Ցանցի անդամ կազմակերպությունների կարողությունների հզորացմանը, այնպես էլ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն աջակից կառույցների և ՓՄՁ համայնքի միջև համագործակցության զարգացմանը:**

**ԳՇՊՑ-ն իր ջանքերի զգալի մասը կնպատակաուղղի ՓՄՁ-ների սատարմանն ու շահերի պաշտպանությանը նաև տեղական մակարդակում: Այս ուղղությամբ ԳՇՊՑ-ի գործողությունները կներառեն բանակցություններ համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինները ներկայացնող պաշտոնյաների հետ, մասնակցություն քննարկումներին, խորհրդակցություններին և համաժողովներին, ինչպես նաև այլ նմանատիպ միջոցառումներին:**

**ԳՇՊՑ-ն հատուկ գործունեություն կիրականացնի Ցանցի անդամության ընդլայնման ուղղությամբ և կնշակի անդամության զարգացման համապատասխան ռազմավարություն:** Դա ոչ միայն կավելացնի հատկացումները գործող անդամների կողմից, այլև կնպաստի նոր անդամների ներգրավմանը: Մեծաթիվ անդամությունը նշանակում է ավելի մեծ ընտրազանգված, հետևաբար, ավելի մեծ ազդեցություն օրենսդիրների վրա: Այլ խոսքով, շահերի պաշտպանության ուղղությամբ աշխատանքը անդամներին կզինի անհրաժեշտ տեղեկատվությամբ՝ բարենպաստ գործարար միջավայրի ձևավորմանը նպաստելու համար:

***ԳՇՊՑ երկարաժամկետ ռազմավարական նպատակները.***

- ՓՄՁ հանրության և կառավարական մարմինների միջև փոխհարաբերությունների կարգավորումը և կառուցողական համագործակցության ձևավորումը՝ ձեռնարկատիրության շահերին համահունչ սոցիալ-տնտեսական բարեփոխումների իրականացմանը նպաստելու և աջակցելու նպատակով:
- ՓՄՁ համար նշանակալից և կարևոր պետական նախաձեռնությունների վերաբերյալ բիզնես հանրության իրազեկության ապահովումը:
- Ձեռնարկատիրության տարբեր ոլորտներում պետական քաղաքականության ձևավորման վերաբերյալ խորհրդատվական-փորձագիտական համակարգի ստեղծումը:
- ՓՄՁ ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի վերահսկումը և անհրաժեշտության պարագայում ձեռնարկատերերի շահերի պաշտպանությունը:
- ԳՇՊՑ-ի կողմից ՓՄՁ շահերի պաշտպանության իրականացման համապատասխան առաջնահերթությունների վերահաստատում:

***ԳՇՊՑ կարճաժամկետ ռազմավարական նպատակները***

Սույն Ռազմավարության շրջանակներում, ԳՇՊՑ-ն որպես իր կարճաժամկետ ռազմավարական կարևորագույն նպատակ է ճանաչում ՀՀ Կառավարության կողմից ՓՄՁ Ջարգացման Ազգային Խորհրդի ստեղծմանը աջակցությունը և ակտիվ մասնակցությունը Խորհրդի աշխատանքներին՝ ՓՄՁ ոլորտի խնդիրները բարձր մակարդակով ներկայացնելու և համապատասխան լուծումներ տալու նպատակով:

ԳՇՊՑ-ն ՓՄՁ Ազգային Խորհրդում կծավալի փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրների բացահայտում և դրանց լուծմանն ուղղված համապատասխան առաջարկությունների ներկայացում՝ ՓՄՁ ոլորտը կարգավորող քաղաքականության պետական ծրագրերի մշակմանը և դրանց հետևողական իրականացմանը ՓՄՁ հանրության ակտիվ մասնակցությունն ապահովելու նպատակով և միջոցով:

ՓՄՁ զարգացմանն ուղղված քաղաքականության ձևավորման գործընթացում գործարար շահերի պաշտպանության ասպարեզում ՓՄՁ հանրության և նրա ներկայացուցչական կառույցների համախմբումը խթանելու, իրազեկության բարձրացման և ժողովրդավարական գործընթացներին գործարար հանրության մասնակցության միջոցով մասնավոր բիզնեսի ու շուկայական տնտեսության զարգացմանն ուղղված արդյունավետ քաղաքականության ձևավորման մեջ ներգրավված լինելու նպատակով ԳՇՊՑ-ն մտադիր է.

- *Համատեղել ՓՄՁ համայնքի կարողությունները և համախմբել համախոհներին ՓՄՁ հատվածի շահերի պաշտպանության շուրջ:*
- *Սատարել ՓՄՁ ոլորտի բարեփոխումներին ազգային և տեղական մակարդակներում:*
- *Իրազեկել հանրությանը ՓՄՁ ոլորտը կարգավորող քաղաքականության և խնդիրների վերաբերյալ:*

Սույն Ռազմավարությունը իրականացնելու համար ԳՇՊՑ-ն մտադիր է ձեռնարկել հետևյալ գործողությունները.

- ***Փոքր և միջին ձեռնարկատիրական և ընդհանուր առմամբ ուսումնասիրությունների և հետազոտությունների իրականացում***

Որոշումների կայացման գործընթացի վրա կարևոր ազդեցություն է գործում հասարակական կարծիքը: Այդ իսկ պատճառով կարևոր է պարզել հասարակական կարծիքը քննարկվող հարցի վերաբերյալ: Դա կօգնի խուսափել ավելորդ ջանքեր գործադրելուց այնպիսի քաղաքականության պաշտպանության համար, որի դեմ հանդես է գալիս ՓՄՁ համայնքի մեծ մասը և պայքարել հանուն որևէ բանի, որը ամենայն հավանականությամբ տանուլ կտրվի: Եթե որոշակի հարցի վերաբերյալ չկան անցկացված որևէ ուսումնասիրության տվյալներ, ապա պետք է կազմակերպել հարցումներ և աշխատանք ֆոկլուս-խմբերի հետ, անհրաժեշտության դեպքում դրա համար համապատասխան մասնագետ վարձելու միջոցով:

➤ **Կլոր-սեղան քննարկումների կազմակերպում երևանում և մարզերում:**

Կլոր-սեղան քննարկումները կդառնան այն հարթակը, ուր շահագրգիռ խմբերը կբարձրաձայնեն իրենց մոտեցումները ՓՄՁ քաղաքականության մեջ առկա խնդիրների վերաբերյալ, կքննարկեն օրենսդրական և ավիագծերի վերաբերյալ իրենց տեսակետները: Քննարկումները կծառայեն հստակեցնելու համար քարոզարշավի քայլերը: Քննարկումները կծառայեն նաև ՓՄՁ քաղաքականության բարեփոխումների անհրաժեշտության վերաբերյալ հասարակության իրազեկմանը:

➤ **Համախոհների համախմբում:**

Նպատակ ունենալով ՓՄՁ ոլորտը կարգավորող պետական քաղաքականության ձևավորման և տնտեսության մասնավոր հատվածի շահերի պաշտպանության շուրջ համակիրների համախմբումը, ԳՇՊՑ-ն մտադիր է համատեղել երկրի բիզնես հանրության, շահագրգիռ պետական և հասարակական կառույցների և ՁԼՄ-ների կարողությունները: Դրանք են. ձեռներեցների միավորումները, բիզնես ասոցիացիաները, մասնավոր ձեռնարկատիրության շահերը ներկայացնող պետական, ազգային և հանրապետական կառույցները:

ԳՇՊՑ-ն իր ռազմավարական կարևոր խնդիրներից է համարում ձևավորել համակիրների կայուն զանգված: Նկատի առնելով որ ՓՄՁ ոլորտի շահերի պաշտպանության խնդիրը սերտորեն շաղկապված է երկրում առկա սոցիալական հիմնախնդիրների լուծման հետ՝ որպես համակիրների կոալիցիայի անդամ է նախատեսված ընդգրկել նաև ՀՀ Սոցիալական ապահովության նախարարությունը:

ԳՇՊՑ-ն համատեղ քննարկումների, խորհրդակցությունների, համաժողովների, վերլուծությունների արդյունքում կձևավորի և կներկայացնի իր դիտողությունները և առաջարկությունները «Հայաստանում ՓՄՁ զարգացման հայեցակարգ»-ի վերաբերյալ: Տվյալ ռազմավարական խնդիրը իրականացնելով ԳՇՊՑ-ն կնպաստի ՓՄՁ հանրությունը համախմբելու միջոցով կառավարման ժողովրդավարական սկզբունքների արմատավորմանը և ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված տեղական նախաձեռնությունների իրականացմանը:

Գործարար հանրության ազգային և տեղական պետական և հասարակական կառույցները համախմբված կլինեն ակտիվ քաղաքական գործընթացների, քաղաքականության բարեփոխումների պլանավորման, դրանց ընթացքի վերահսկման, բիզնեսի համար բարենպաստ միջավայրի ձևավորման և շահերի պաշտպանության ոլորտներում արդյունավետ գործող համակարգի մեջ:

➤ *Մասնավոր-պետական հատվածների երկխոսության խթանում*

Քարոզարշավների կազմակերպում: ԳՇՊՑ-ն հատուկ ուշադրություն կդարձնի քարոզարշավների ռազմավարությանը, որը կուղղորդի ԳՇՊՑ-ի որոշումների ընդունմանն ուղված մասնակցային գործունեությունը ազգային և տեղական մակարդակներում ՓՄՁ քաղաքականության բարեփոխումների իրականացման նպատակով: Նախատեսվում է քարոզարշավներին ներգրավել ՀՀ Կառավարության, Ազգային ժողովի համախոհ փորձագետների:

Քարոզարշավների արդյունավետ կազմակերպման համար Ցանցը նախատեսում է իրականացնել հետևյալ քայլերը.

- հստակ կերպով ձևակերպել և ներկայացնել Ցանցի անդամների շահերը՝ որպես մեկ միասնական տեսակետ՝
- կազմակերպել հանդիպումներ օրենսդիրների հետ՝ հետաքրքրող հարցերը կամ անցկացված ուսումնասիրությունների արդյունքները քննարկելու համար
- պարբերական կապեր և սերտ աշխատանքային հարաբերություններ հաստատել պետական պաշտոնյաների հետ
- օգտագործել այդ կապերը անդամների շահերի պաշտպանության համար՝ ազդելով որոշակի օրենսդրական նախաձեռնությունների և քաղաքական առաջարկությունների ընթացքի և ուղղությունների վրա:
- ներգրավել Ցանցը անդամների շահերի պաշտպանությանն ուղղված պրոակտիվ և ռեակտիվ գործողությունների մեջ: Մասնավոր կապերը նաև կարող են օգնել Ցանցին մշտապես իրազեկ լինել ընթացիկ և նախատեսվող քաղաքական ծրագրերին, որը հնարավորություն է տալիս ավելի մանրակրկիտ կերպով ուսումնասիրել խնդիրը և նախապատրաստել հստակ դիրքորոշումներ:
- կանխարգելել փոքր և միջին ձեռնարկատիրությանն առնչվող օրենսդրական կամ իրավական հիմնադրույթների հաճախակի փոփոխությունները, որոնք կարող են վախեցնել ներդրողներին և խոչընդոտել ձեռներեցության զարգացմանը
- հետամուտ լինել օրենքների կիրարկմանը՝ հետևելով, որ անդամների շահերին առնչվող օրենքները կիրարկվեն արդարացիորեն, հետևողական և անհետաձգելի կերպով:

➤ ***Իր ազեկման գործողությունն ներքին իրականացում***

**Վեբ կայք:** Ցանցի գործունեության և ուսաբանումը կիրականացվի հատուկ մշակված և պարբերաբար թարմացվող վեբկայքի հատուկ էջում, որը կծառայի որպես միջոց Հայաստանում շահերի պաշտպանության նախաձեռնությունների, ՓՄՁ օրենսդրական բարեփոխումների, ՓՄՁ հանրության իրավունքների պաշտպանության վերաբերյալ նյութերի կենտրոնացման և տարածման համար: Նյութերը կստացվեն տարբեր աղբյուրներից. միջազգային կազմակերպություններից, վերլուծական կենտրոններից, ՁԼՄ-ներից, մասնավոր անձանցից և պետական կառույցներից, օգնելով հրապարակելու դրանց գործունեությունը և օժանդակելով Հայաստանում ՓՄՁ քաղաքականության բարեփոխումները:

Վեբ կայքը հանդես կգա որպես շահերի պաշտպանության արդյունավետ ռեսուրս, մասնավորապես որպես տնտեսական քաղաքականություն և օրենսդրական զարգացումների ազդարար:

**Էլեկտրոնային պարբերական տեղեկատվության պատրաստում և տարածում:**

Օրենսդրական փոփոխությունների մասին տեղեկատվությունը և Ցանցի գործունեության ողջ ընթացքը՝ հարցումներ և կլոր-սեղան քննարկումների արդյունքները, կլուսաբանվեն Տեղեկատվի միջոցով: Հրապարակումներից ստացված արձագանքները ևս հաշվի կառնվեն օրենսդրական նախագծերի վերամշակման ընթացքում:

**ՁԼՄ-ներին ներգրավում:**

Հասարակական կարծիքի ձևավորման լավագույն ձևերից մեկը զանգվածային լրատվամիջոցներն են: Զանգվածային լրատվության միջոցները մեծապես կարող են նպաստել Ցանցի քարոզարշավներին և տեղեկատվություն տարածման արդյունավետ կազմակերպման գործին: Լրագրողները մեծ քանակությամբ տեղեկատվություն են ստանում պաշտոնական աղբյուրներից, բայց նրանք կարող են ավելի լավ վերլուծել այդ տեղեկատվությունը, եթե իրագեկ լինեն ԳՇՊՑ այլընտրանքային տեսակետներին: Ցանցը կօգտվի ՁԼՄ-ների ծառայություններից նաև գովազդելու համար վեբ կայքը այնպես, որ հետաքրքրված յուրաքանչյուր ոք կկարողանա այցելել այն: